գրոշմեալք։ Ի ՀՃակէն՝ որոյ կիսաժամաւ է շրջապատ և խոր յոյժ, ելանէ վտակն Կոպոյ, և առ Նովաւ էր անշուշտ բերդն համանուն՝ ուր ամրացաւ Սմբատ Ա, և առ խնայելոյ յիւրսն՝ անձնատուր եղև 'ի Յուսուփ։ յառաջնումն կոչէր Արոտգերիդ բերդ։ զոր շինեաց արքայն Արշակ Բ, և կին նորա Փառանձեմ անտի գերեցաւ և սպանաւ 'ի վերջ կոյս Դ դարու։

Ընդ մէջ Կաղզուանայ, Շօրեկելի, Ղարսայ և Բասենոյ կայ փոքրիկ և լեռնավայր վիճակն ԿԷՉԷՎԱՆ կամ ԽՈՒՃՎԱՆ, ընդ որ անցանէ Պայմ-սու օժանդակ Երասխայ, ունելով յերկրէն զամուր աւանն ԿԷԷՎԱՆ կամ ԿԷԼՍԱՆ, և զգեղոյն Ճամաղլու, Գրգրանիրան, և այլն։

Բ. ԷՐԶԻՌՈՒՄ ՆԱՀԱՆԳ

44. ԷՐԶԻՌՈՒՄ նահանգն որ է ԿԱՐԻՆ ըստ մեզ, յանուն գլխաւորի գաւառացն Բարձր Հայոց, նախապատիւ ամենայն գաւառաց Օսմանեան Հայաստանի և քան զյոգունս այլոց աշխարհաց նոցին։ կարի ընդարձակ է իբրև գաւառ առանձնակ՝ ունելով յարևելից կուսէ ՀՂԱՐս, 'ի հիւսիսոյ զԵգերացիս և զՊոնտոս, յարևմտից զՓոքր Հայս, և 'ի հարաւոյ զգաւառն Խարբերդու։ ընդարձակագոյն ևս իբրև նահանգ ըստ վարչութեան, ունելով ընդ իւրև և զՂԱՐս և զՊայէզիտ։ Բայց մեր բանք աստ զառանձին գաւառէն են, յորում բովանդակին գաւառակք և վիճակք իբրև երեսուն, յորոց ոմանք յառաջագոյն մասն էին Զըլարբայ կամ այլոց գաւառաց։ որոց ամենեցուն առաջին է ԷՐԶԻՌՈՒՄայ վիճակն, որ և ՕԼԼ կոչի, քանզի դաշտ է ընդարձակ՝ իբրև 32 մղոն ընդ երկայնն յարևելից յարևմուտս և 14–18 լայն 'ի հիւսիսոյ ընդ հարաւ, պարսպեալ գրեաթէ ամենուստ լերամբք բարձամբ, բարձր գոլով և ինքնին դաշտին իբրև 6000'։ յոր ինչանեն 'ի լերանցն և խաղան երկոքին առաջք արևմտեանն կամ հիւսիսայնոյն Եփրատայ մեծի՝ Գարասու և Սարչամ (20) և ելանեն ընդ արևմուտս կոյս, գործեալ և զՇամբն Կարնոյ, այսինքն ՃահՃԴ ԼՃաձև (18)։ յորոյ հարաւոյ կայ մեծ ՓԱՂԱՔԱՔՆ ԿԱՐՆՈՑ՝ որպէս կոչէր 'ի հնումն, և ապա ԹԷՈԴՈՍՈՒՊՈԼԻՍ վասն նորոգ շինութեանն 'ի Թէոդոսէ կայսերէ 'ի սկիզբն Ե դարու, լինել մայր քաղաքաց բաժնի յունականն Հայաստանի։ վասն այնորիկ և յայլազգեաց արևելեայց կոչեցաւ ԵՐԶԻՌՈՒՄ (Յունաց Երկիր կամ Արքն)։ և եղև միշտ քաղաք անուանի ըստ քաղաքական վարչութեան, ամրութեան և շահաստան վաճառուց։ վասն այնորիկ և ընդ բազմաց անկեալ ձեռամբ մերձ ընդ մերձ Յունաց, Պարսից, Արաբացւոց, Թուրքաց, Վլրաց և Թաթարաց, յորոց և սիրագլուխ կամ հարկատու սուլտանք և պեկք ևս նստան 'ի նմա յաւուրս Բագրատունեաց և Ռուբինեանց, յետոյ ուրեմն նուաճեալ մնաց 'ի ձեռս Օսմանեանց, դամ մի միայն յետ 1400 ամի շինութեանն 'ի Թէոդոսէ՝ 'ի բուռն Ռուսաց անկեալ, յամին 1828։ յորոց ոչ սակաւ անշքեցաւ, աւարեցաւ և աւերեցաւ քաղաքն և նուազեաց 'ի բնակութենէ և 'ի շահավաճառութենէ։ Թէպէտ և դարձեալ բարգաւաճել սկսաւ, պահեալ միշտ ընդհանրական Օսմանեան իշխանութեան 'ի Հայս։ որոյ վարիչն կամ քաղաքապետ փաշայ բարձրատիտիւ՝ սպարապետ է ասիական բանակի բազում գաւառաց։ բարգաւաճագոյն ևս լինէր արդեօք՝ եթէ չէր բարձր յերեսաց ծովու ոտս 5740'։ վասն որոյ երկարաձմեռն և ցրտին յոյժ, անփայտ և անպտուղ։ բայց ամարանի՝ զուարթանայ շահեկան բուսաբերութեամբ և երամ երամ հաւուք և զանազան գեղով բնութեան։ — Ի մեծագուսածս հին շինուածոց քաղաքին՝ որ հարկ է թէ չէին սակաւք, այժմ նշանաւորք են բերդն ստուարապարիսպ՝ Գարա-գալէ կոչեցեալ, յոր անուն և քաղաքն Գալիգալէ կոչէր յԱրաբացւոց, և միջնաբերդն Իլգալէ, յորում ապարանք կուսակալին և զինարանն ՃԷԳԱՆԷ խորափոր բանտիւք, և աշտարակաւ թէֆէ-ֆնարէ կոչելով։ Պարիսպ միւս ածեալ է զբերդաւն, և մէջ երկոցուն պարսպացն Հիսար-պիլէն կոչեցեալ՝ դատարկ է, երկոքին ևս ունին աշտարակս կամ բբրգունս՝ 62 ընդ ամէն, և ջրբք ջրբք դրունք պարբսպացն, և խրամ խոր զբերդաւն։ երևին նշմարք և այլոց խրամի հեռագոյն զքաղաքաւն ածեալ, որոյ է շրջապատ իբր երեք ժամուք։ Ի քաղաքամիջին նշանաւոր շինուած է Ռ-լուՃամ մզկիթն, իբր 150' ընդ երկայն և 120' լայն, սաքաշէն է արդ ձեղուամբ, ջրբք կարգ կամարօք 'ի վերայ 28 որմասեանց, զի գմբէթն կործանեալ է։ եօթն դրունք են նորա, երեքն որմեալք։ թուի գիւանատուն լեալ 'ի հնումն։ Նշանաւոր է և ԶԻՓԷ-ֆնարէ՝ ոգոյ աշտարակք յախճապակեայք գունագոյնք, և աղօթանոցն և ուսումնարան հին առ Նովաւ կանգնեալ յամին 935 հրամանաւ Մելիք խանի թագաւորի խորազմեանց, որպէս ցուցանէ պարսկերէն արձանագիր քիւֆի գրով գրեալ։

Յետ սոցա գեղեցիկք 'ի մզկիթս, որ բազմաթիւ են, Ն-մուէնէ-ֆէոպէ, որ է համաձեւ և համաչափ քեսալէին Մէքքէի։ Գ-ուրդ-ալ-ճամ, Զինիլի-ֆնարէ, ՃաՓուրէ, և այլն։ Յայլ շինուածս գլխաւորք են բազանիքն Մէրմէ-համամ, Կէօմրի-ի-համամ, և այլն։ — ՊԷՊԷՊԷն, որ է թանգարանոց վաճառուց, ճոխագոյն քան զբազում շահաստանաց Ասիոյ, յոր դան վաճառք 'ի Կովկասայ, 'ի Պարսից, 'ի Հնդկաց և 'ի Կոստանդնուպոլսոյ։ իսկ 'ի քաղաքին ընդ վաճառք հայթհայթին խաղալս, պղնձեղէն անօթք և կաղամբք, ըզգեստք, և այլն։ Առատ են ջուրք քաղաքին աղբերց բազմութեամբ, յորս և Ն-ուհ-պաղ-ի-ալ-ֆէ-ուն, որ այսպէս կոչի յանուն սրբոց վկայիցն Սահակայ և Յովսեփայ նահատակելոց անդ յամին 808, որոց տապանք են մերձ յՈՒԼՈՒՃամի։ — Թիւ բնակչաց քաղաքին աւելի քան զ40.000 (ըստ ոմանց 75.000), յորս 600 և ըստ ոմանց իբրև 1000 տունք են Հայոց, որոց գլխաւոր եկեղեցի է Ս։ Աստուածածնին մեծ և նորաշէն։ 'ի թեմի եպիսկոպոսին 'ի գաւառին Էրզրուումայ են իբրև 2000 տունք Հայոց։ Են և հռովմական Հայք 80 երդ, և ունին եկեղեցի յանուն Տիրամօր։

45. Ի դաշտին Կարնոյ սփռեալ են իբրև 120 գեօղք, յորս գլխաւորք են Իլիճա կամ Կլիճա 3 ժա-